ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 30

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.05.2018թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
   (Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան)
2. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի հաստատումը:
   (Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան)
3. ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանների հաստատումը:
   (Զեկուցող՝ Ա. Դավթյան)

4. Ընթացիկ հարցեր:
   - ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության

թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը: Ա. Դավթյանը նշեց, որ «ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ը փոփոխություններով և լրացումներով ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին (Հավելված 1): Նա նշեց, որ ԵՊՀ-ում գործող համապատասխան կարգում կատարվել են փոփոխություններ, որոնք ուսումնասիրելուց հետո անհրաժեշտ փոփոխությունները կատարվել են նաև ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան կանոնակարգում: Հիմնական փոփոխությունները կատարվել են 2 –րդ կետում, որը ամբողջովին ներկայացվում է ստորև.

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում (ուսանողական կրթաթոշակ) տրամադրվում է՝

5.1. մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով,

5.2. օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան երեխա-ուսանողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող-ուսանողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

ե) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողները՝ որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսումնառության ավարտը:

Սույն կանոնակարգի 5.2. կետի «ա» և «ե» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը:

Սույն կանոնակարգի 5.2. կետի «բ», «գ» և «դ» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

Արտահայտվեցին – ՄԿՈԱ բաժնի պետ Մ. Ճաղարյանը և ֆակուլտետների դեկանները:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին առաջարկված փոփոխություններին և առաջարկեցին հաստատել ‹‹ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ››-ը փոփոխություններով և լրացումներով հանդերձ համաձայն հավելված 1-ի:

Որոշեցին

Որոշում 30/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական

համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել, որ կանոնակարգի 9-րդ կետով սահմանված՝ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման մրցույթի պայմանները կիրառվելու են 2017-2018 ուսումնական տարվա ավարտից հետո անցկացվող մրցույթի պահից սկսած:
3. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. հուլիսի 8-ին թիվ 25 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ պրակտիկան ուսումնառության բաղկացուցիչ մասն է և հնարավորություն է ընձեռում ստացած գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, ձեռք բերել մասնագիտական հմտություններ և փորձառություն, լինում է ուսումնական, մասնագիտական և մանկավարժական: Ուսումնական պրակտիկայի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքներն ու նպաստել մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Մասնագիտական պրակտիկայի նպատակն է գործնական աշխատանքների միջոցով զարգացնել ուսանողների

մասնագիտական հմտությունները և փորձառությունը, ինչպես նաև մասնագիտական ոլորտում ինքնուրույն աշխատելու կարողությունները: Մանկավարժական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողի՝ որպես ապագա մանկավարժի մասնագիտական կարողությունները և նպաստել մանկավարժական փորձառության ձեռքբերմանը:

Նա կարևորեց որակյալ կրթության ապահովվելու գործում ուսանողների պրակտիկայի արդյունավետ կազմակերպումը, նշեց, որ խնդիրը շատ կարևոր է և արդիական և կա այդ գործընթացը հաստակեցնելու խնդիր: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ –ում այդ խնդիրը կանոնակարգելու համար հաստատել է համապատասխան կարգ, որով և առաջնորդվելով ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչությունը մշակել է ‹‹ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ›› -ը (Հավելված 2): Սույն կարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:

Որոշեցին

Որոշում 30/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանների հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի զեկուցումը:

ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանները կազմվել են համաձայն ընթացակարգի: Դրանք քննարկվել են համապատասխան ֆակուլտետների գիտական խորհուրդներում, իսկ ուսումնամեթոդական վարչությունում վերջնական ստուգվել է ուսումնական պլանների համապատասխանությունը ընդունված չափորոշիչներին:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը առաջարկեց հաստատել ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանները համաձայն հավելված 3-ի:

Որոշեցին

Որոշում 30/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 21-րդ կետի 16-րդ ենթակետով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի առկա (2018-2022) և հեռակա (2018-2023) ուսուցման ուսումնական պլանները համաձայն հավելված 3-ի :
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի և գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնների 2018թ. մայիսի 25-ի թիվ 10 համատեղ նիստում քննարկվել է Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժ/պ, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ Մարտին Վարդանի Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի դեկորոտիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժ/պ, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատում և մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն է իրականացնում 2015թ.-ի սեպտեմբերից սկսած: Նա թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013 թ.-ին, պաշտպանելուց հետո ունի

հրատարակված 12(տասներկու) գիտական հոդված, 1(մեկ) մենագրություն և (մեկ) ուսումնամեթոդական աշխատանք:

Նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների կատարման հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական և կարողությունների զարգացմանը: Այդ ամենի անառարկելի վկայությունը պետք է համարել Մ. Վ. Հարությունյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները:

Նա դասավանդել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ինչպես նաև 2013թ-ից մինչ այժմ աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում, իսկ 2017թ-ից համատեղության կարգով նաև Աբովյանի պետական քոլեջում: Մ. Հարությունյանը ունի մի շարք Եվրոպական կրթական և գիտահետազոտական հաստատությունների հետ համագործակցության փորձ: Մ. Հարությունյանը Հայաստանի Հանրապետության նկարիչների միության անդամ է դարձել 2017թ-ին: Իր ստեղծագործական գործունեության ընթացքում նա բազմիցս մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների, գիտաժողովների, սեմինարների, որոնք վերաբերել են արվեստագիտությանը, ճարտարապետությանն ու դիզայնին:

Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ

ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն›› կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժ/պ, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը քվեարկության դրեց Մարտին Վարդանի Հարությունյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Որոշեցին

Որոշում 30/4

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին›› N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Մարտին Վարդանի Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Գիտական խորհրդի նախագահ՝_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝ _____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

12.06.2018թ.